

կարօտներ կան, բայց մուրացկանութիւն չկայ: Մուրացկանութիւնը արգելուած է օրէնքով, որովհետեւ հասարակութիւնը իր ամբողջութեամբ ինքն է յանձն առել կերակրել իր դժբախտ անդամներին:

Յ'գրութիւն!
Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

ԳԵՂԵՑԿՈՒՅԻՆԵՐԸ

(Անտոն Աեխովի)

Յիշում եմ, դեռ հինգերորդ թէ վեցերորդ դասարանի գիմնազիստ էի, պապիս հետ Դոնի նահանգի Բոլշայա Կրեպկայա գիւղից գնում էինք Ռոստով: Օգոստոս ամսունքն էր. մի ասթ և սրտմաշուկ-տաղտկալի օր էր: Շոքից և չոր ու տապ քամուց, որ փոշու ամպեր էր քշում մեր հանդէպ, կոպերս իրար էին կպել և բերանս ցածաքել. մարդ չէր ուզում ոչ նայել, ոչ խօսել, ոչ մտածել, և երբ մեր քնով ընկած կառապանը, խախտ կարպօն, ձիերի վրայ մտրակը թափ տալիս՝ շեպում էր գլխարկիս, ես չէի բողոքում, ծպտուն չէի հանում, այլ միայն թմրածութիւնից սթափուելով՝ տխուր ու հեղ նայում էի հեռուն տեսնելու, թէ արդեօք փոշու միջով չի երևում իջեւանի գիւղը: Ձիերին ուռացնելու համար կանդ առանք Բախչի-Մալա անունով մեծ հայկական գիւղում, պապիս ծանօթ մի հարուստ հայի մօտ: Կեանքումս չեմ տեսել երբէք աւելի ծիծաղելի բան, քան այդ հայը: Երեւակայեցէք մի փոքրիկ, խուզած գլուխ խիտ-խիտ ու խոր կախ ընկած յօնքերով, կտցանման քրթով, երկար ու սպիտակած բեխերով և լայն բերանով, որի մէջից դուրս է ցցւում մի երկար, կեռասէ չիբուխ. այդ փոքրիկ գլուխը անշնորհ կերպով կպցրած է նիհար ու կուզիկ մարմնին. հագի շորերը Փանտաստիկական են՝ պոչատ, կարմիր բաճկոն և լայն, վառ-կապտադոյն վարտիք: Հայը ման գալիս ոտնեւրը չուում էր և հողաթափները քսքստացնում, խօսելիս չիբուխը

Յուլիս, 1904.

բերնիցը վայր չէր թողնում, այլ պահում էր իրան զուտ հայկական արժանապատուութեամբ,—չէր ժպտում, աչքերը չոռւմ էր և աշխատում՝ որքան կարելի է՝ քիչ ուշադրութիւն դարձնել իր հիւրերի վրայ:

Հայի սենեակներում ոչ քամի կար, ոչ փողի, բայց այդտեղ էլ նոյնքան անախորժ էր անցնում ժամանակը և նոյնքան տոթ էր ու տաղտկալի, որքան և դրսի հարթավայրում ու ճանապարհին: Յիշում եմ, շոքից թմրած և փռաթաթախ՝ նստած էի անկիւնի կանաչ սնդուկի վրայ: Փայտէ անոններէ պատերը, կահկարասիքը և սուսրած տախտակամածը արեւախանձ չոր փայտի հոտ էին արձակում: Ուր որ նայում էի՝ ճանճ էր, ճանճ ու ճանճ... Պապս ու հայր կիսաձայն խօսում էին ոչխարների մասին... Շն գիտէի, որ ինքնաեռ պատրաստելը մի ժամ կը քաշի, որ պապս ամենաքիչը մի ժամ թէյ կը խմի ու յետոյ երկու-երեք ժամով կը պառկի քնելու, որ մի քառորդ օր կորցնելու եմ սպասողական դրութեան մէջ, որից յետոյ նորից սկսուելու են շոքը, փողին և խորդ ու բորդ ճանապարհները: Լսում էի երկու ձայների փնփնթոցը, և սկսում էր ինձ թուալ, թէ այդ հային, այդ պահարանը, այդ ճանճերին, այդ պատուհանները, որոնց մէջ խաղում է կիզիչ արևը, շատ վաղուց եմ տեսնում ու կը դադարեմ տեսնելուց շատ հեռաւոր ապագայում, ու հետզհետէ ատելութեամբ էի համակում դէպի հարթավայրը, արևը, ճանճերը...

Գլխաշոր կապած մի խախուղունի ներս բերեց թէյի սարքը մատուցարանի վրայ, յետոյ ինքնաեռը: Հայը առանց շտապելու դուրս եկաւ հաշտը ու գոռաց.

—Մաշեա, արի թէյ ածա: Ո՛ւր ես, Մաշեա:

Շտապ քայլերի ձայն եկաւ և սենեակը մտաւ տանհինգտանվեց տարեկան մի աղջիկ, հասարակ չի՞է հագուստով և սպիտակ գլխաշորով: Մէջքն ինձ արած սկսեց բաժակները լուանալ ու թէյ ածել, և ես միայն այն նկատեցի, որ մէջքը բարակ էր, ոտները բոպիկ և որ փոքրիկ, մերկ կրունկները ծածկում էր ցած վայր թողած վարտիքը:

Տախտէրը հրաւիրեց թէյ խմեմ: Սեղանին նստելիս նայեցի ինձ թէյ տուող օրիորդի երեսին և յանկարծ այնպէս զգացի, կարծես ներսս զով քամի փչեց ու քշեց հոգուս վրայից այդ օրուայ բոլոր տպաւորութիւնները իրանց տաղտկութեան ու փռու հետ միասին: Տեսայ չքնաղ գծերը մի հրաշալի դէմքի, որի նմանը հս ոչ տեսել էի, ոչ երագել: Առջևս կանգնած էր մի գեղեցկուհի, և ես այդ հասկացայ առաջին հայեացքից, ինչպէս հասկանում եմ՝ օրինակ՝ կայծակը:

Պատրաստ եմ երդուելու, որ Մաշան, կամ, ինչպէս հայրն էր անուանում, Մաշեան, կատարեալ գեղեցկուհի էր, բայց չեմ կարող այդ ապացուցանել: Պատահում է երբեմն, որ ամպերը խառնիխուռն խմբում են հորիզոնում և արևը, նրանց յետևին թաք կացած, հազարումի գոյն է տալիս նրանց ու երկնքին՝ ծիրանի, նարնջի, ոսկեգոյն, կարմրակապոյտ, կեղտոտ-վարդագոյն. ամպերից մէկը նմանում է վարդապետի, միւսը ձկան, երրորդը չալմաւոր տաճկի: Շողքը բռնել է երկընքի երրորդ մասը, փայլում է եկեղեցու խաչի և կալուածատիրոջ տան ապակիների վրայ, ցոլում է գետի և լճակների երեսին, խաղում ծառերի ճղքներին, հեռում՝ վերջալոյսի ֆոնի վրայ՝ ուր որ գիշերելու է թռչում վայրի բադերի երամը... Եւ կովերին տուն քող հօտաղը, և կառքով անցնող երկրաչափը, և զբօսնող պարոնները,—բոլորն էլ նայում են վերջալոյսին և քոլորն էլ՝ առանց բացառութեան՝ գտնում են, որ նա սարսափելի գեղեցիկ է, բայց ոչ որ չգիտի և չի կարող ասել, թէ ինչուսն է այդտեղ գեղեցկութիւնը:

Միայն ես չէի, որ գտնում էի, թէ հայ աղջիկը գեղեցիկ է: Պապս, ութսուն տարեկան մի ծերունի, սարթ բնաւորութեան տէր և անտարբեր դէպի կանայք ու բնութեան գեղեցկութիւնները, մի ամբողջ բոպէ փաղաքշօրէն նայում էր Մաշայի վրայ և յետոյ դիմելով հային՝ հարցրեց.

—Ձեր աղջիկն է, Աւետ նազարիչ:

—Աղջիկս: Հա, աղջիկս է...—պատասխանեց հայը:

—Լաւ օրիորդ է,—գովեց պապս:

Այդ հայ աղջկայ գեղեցկութիւնը նկարիչը կ'անուանէր կլասիկական և խիստ գեղեցկութիւն: Այդ իսկևիսկ այն գեղեցկութիւնն էր, որը զննելիս, Աստուծուն է յայտնի թէ ինչու, դուք համոզուում էք, որ ձեր տեսածը կանոնաւոր գծեր են, որ այդ մազերը, աչք ու յօնքը, քիթ ու բերանը, վիզն ու կուրծքը և այդ մատաղ մարմնի բոլոր շարժումները ի մի ձուլուելով կազմել են մի ամբողջութիւն, մի ներդաշնակ ակկորդ, որի մէջ բնութիւնը մազաչափ անգամ չի սխալուել. ինչ որ պատճառով ձեզ թւում է, թէ իդէալօրէն գեղեցիկ կիներ պէտք է ունենայ իսկևիսկ այնպիսի քիթ, ինչպէս Մաշայի քիթը, ուղիղ և փոքր ինչ կոր, նոյնպիսի մեծ ու թուկ աչքեր, նոյնպիսի երկար թերթերունքներ, նոյնպիսի խումար հայեացք, թէ նրա սև ու զանգուր մազերն ու յօնքերը նոյնպէս սաղում են ճակատի ու այտերի շարմաղ սպիտակութեանը, ինչպէս դալար եղեգը մարմանդ գետակին. Մաշայի սպիտակ վիզը ու դեռահաս կուրծքը քիչ են դարգացած, բայց ձեզ թւում է, որ այդ-

պիսի վիզ ու կուրծք քանդակելու համար պէտք է փհազին ստեղծագործական տաղանդ: Նայում էք և փոքրափոքր ձեր մէջ ցանկութիւն է ծագում մի որևէ արտասովոր ախորժելի, անկեղծ ու գեղեցիկ բան ասել Մաշային, նոյնպէս գեղեցիկ, ինչպէս ինքը:

Սկզբում ցաւ ու ամօթ էր պատճառում ինձ այն բանը, որ Մաշեան ամենևին ուշք չի դարձնում իմ վրայ ու շարունակ գետնին է նայում. ինձ թւում էր, թէ ինչ-որ մի առանձին օդ, երջանիկ ու գոռոզ, անջատում էր նրան ինձանից ու խանդոտ կերպով սքողում հայեացքիցս:

«Այդ նրանից է, մտածում էի ինձուինձ, որ սաստիկ փոշոտ եմ ու արևառ և մէկ էլ նրանից, որ դեռ երեսայ եմ»:

Բայց յետոյ փոքրաւփոքր մոռացայ ինքսինձ ու ամբողջապէս անձնատուր եղայ գեղեցկութեան հմայքին: Այլևս չէի յիշում ճանապարհի ճանճրոյթն ու փոշին, չէի լսում ճանճերի բզզոցը, չէի հասկանում թէյի համը, այլ միմիայն զգում էի, որ սեղանի միւս կողմում կանգնած է մի գեղեցիկ աղջիկ:

Շատ տարօրինակ կերպով էի զգում այդ գեղեցկութիւնը: Մաշան իմ մէջ զարթեցնում էր ոչ թէ ցանկութիւն, հրճումնաբեկ և գուարճութեան զգացմունք, այլ մի տեսակ ծանր, թէպէտ և ախորժելի տխրութիւն: Այդ թախիժը անորոշ էր ու աղօտ, ինչպէս մի երազ: Զգիտեմ ինչու՝ խղճում էի և ինքսինձ, և պապիս, և հային, և նոյնիսկ ջահիլ հայուհուն, և այնպէս էի զգում, կարծես թէ չորսս էլ ինչ-որ մի բան ենք կորցրել, որ շատ կարևոր է ու հարկաւոր կեանքի համար և որ այլևս երբէք չենք գտնի: Պապ էլ տխրեց: Այլևս չէր խօսում ոչխարների մասին, այլ լուռ ու մտազբաղ նայում էր Մաշային:

Թէյից յետոյ պապս պառկեց քնելու, իսկ ես տանից դուրս եկայ ու նստեցի պատշգամբի սանդուխքի վրայ: Այդ տունն էլ Բախչի-Մալայի բոլոր տներին նման արևկող էր. ոչ ծառ կար, ոչ ծածկ, ոչ ստուեր: Չնայելով սարսափելի շոգին, կենդանութիւն և ուրախութիւն էր տիրում հայի բակում: Ընդարձակ բակը տեղ-տեղ կտրող ցածիկ ցանկապատերից մէկի յետևում կալ էին անում: Մի շարքով լծուած տասներկու ձիեր ահագին շառաւիղ կազմելով՝ վազվզում էին կալի մէջտեղում առնկած սեան շուրջը: Նրանց կողքին պտոյտ էր գալիս երկար բաճկոնաւոր ու լայն վարտիքաւոր մի խախոլ, որ մտրակը ճայթեցնում էր ու այնպիսի ձայնով գոռում, կարծես թէ ուզում էր ձիերին տնազ անել ու նրանց վրայ ունեցած իշխանութեամբ պարծենալ:

—Հը-ը-ը, նզովեալներ: Հը-ը-ը... Ժանտախտը տանի ձեզ: Վախենում եք:

Գոյնզգոյն ձիերը չհասկանալով՝ թէ ինչու են իրանց ստիպում այդպէս միեւնոյն տեղում պտոյտ դալ ու ցորենի ցողուններ ջարդել, յաւամայից էին վազում, կարծէք ուժասպառ, և պոչները նեղացածի պէս թափահարում էին: Քամին սմբակների տակից ոսկեգոյն դարմանի ամպեր էր բարձրացնում ու ցանկապատի վրայից քշում դէպի հեռուն: Բարձր ու թարմ եղաններ իր կողքին վիտում էին գեղջկուհիներ փոցները ձեռներին, և շարժւում էին սայլեր, իսկ եղաններին այն կողմը, մի ուրիշ բակում, նոյնպիսի մի սեան շուրջ վազվզում էին ուրիշ տաններով ձիեր և նոյնպիսի մի խախոլ ճայթեցնում էր մտրակը ու տնազ անում ձիերին:

Մանդուխքի աստիճանները արևից սաստիկ տաքացել էին. պատշգամբի ճաղերի և պատուհանների շրջապատների վրայ շոքից տեղ-տեղ խէժ էր դուրս եկել. աստիճանների ու պատուհանածածկերի տակ ստուերի բարակ շերտերում կուչ էին եկել ու իրար կպել կարմիր զատիկներ: Արևը այրում էր գլուխս, կուրծքս ու մէջքս, բայց ես այդ չէի նկատում և միայն զգում էի, որ իմ յետևին հաշտում ու սենեակներում տախտակածի վրայ թփթփում էին երկու բոպիկ. ոտներ: Թէյի սարքը հաւաքելուց յետոյ Մաշեան վազէվազ սանդուխքով իջաւ՝ քամի տալով երեսիս ու թոչունի պէս սլացաւ դէպի մի փոքրիկ, մրոտած յաւելաշէնք, երևի խոհանոցը, որ տեղից տապակած ոչխարի մսի հոտ էր գալիս և հայերէն բարկացկոտ խօսակցութիւն էր լսւում: Նա անյայտացաւ խոհանոցի մուտք դրան մէջ և նրա տեղ դրան շեմքում երևաց մի պառաւ, կորացած հայուհի՝ կարմիր երեսով ու կանաչ վարտիքով: Պառաւը բարկացած էր և ում-որ հայհոյում էր: Շուտով շեմքի վրայ երևաց Մաշեան՝ խոհանոցի տաքութիւնից կարմրած և մի մեծ սև հաց ուսին դրած. հացի ծանրութեան տակ գեղեցիկ կուցած՝ նա բակի միջով վազեց դէպի կալը, ծուլ տուեց ցանկապատի վրայով ու սուզուելով ոսկեգոյն դարմանի ամպի մէջ՝ աներևութացաւ սայլերի յետևին: Ձիերը քշող խախոլը մտրակը վայր թողեց, լոնց ու այդպէս լուռ մի բոպէ նայում էր սայլերի կողմը, յետոյ՝ երբ հայուհին նորից վազելով անցաւ ձիերի կողքով ու յետ ցատկեց ցանկապատի վրայով, խախոլը աչքերով ճանապարհ դրեց նրան և այնպիսի ձայնով գոռաց ձիերի վրայ, որ կարծես սաստիկ վշտացած լինէր.

—Կոտորուէք դուք հն, սատանի զարմեր:

Նւ այնուհետև շարունակ լսում էի հայուհու բոպիկ ոտ-

ների քայլերը ու տեսնում, թէ ինչպէս նա լուրջ ու մտահոգ դէմքով դէս-դէն էր վազում բակի մէջ։ Մերթ սահղուխքով էր բարձրանում—իջնում, քամի տալով երեսիս, մերթ խոհանոց էր վազում, մերթ կալը, մերթ դարպասից դուրս, և ես հազիւ էի կարողանում գլուխս դէս-դէն շուռ տալ՝ նրան դիտելու համար։

Եւ որքան յաճախ էր նա սլանում աչքիս առաջովը իր գեղեցկութեամբ, այնքան աւելի էր սաստկանում թախիծս։ Խղճում էի և ինքսինձ և իրան, հայուհուն, և կալ անող խախուլին, որ տխուր-տխուր ճանապարհ էր դնում նրան հայեացքով ամեն անգամ, երբ նա դարմանի ամպի միջով վազում էր դէպի սայլերը։ Ի՞նչ էր այդ, արդեօք նախմէն դէպի նրա գեղեցկութիւնը, թէ ցաւում էի, որ այդ աղջիկը իմս չէ և երբէք իմս չի լինի և որ ես նրա համար օտար եմ, թէ՞ աղօտ կերպով զգում էի, որ նրա հազուադէպ գեղեցկութիւնը պատահականն է ու անպէտք և ինչպէս ամեն ինչ աշխարհումս՝ անյարատեւ, կամ գուցէ իմ թախիծը այն առանձին զգացմունքն էր, որ մարդու մէջ միշտ զարթնում է իսկական գեղեցկութիւնը դիտելիս,—Աստուած գիտէ։

Սպասողութեան երեք ժամը աննկատելի անցաւ։ Ինձ թւում էր, թէ դեռ ժամանակ չէի ունեցել մի լաւ դիտելու Մաշեային, որ Կարպօն ձին տարաւ գետը, լողացրեց, յետ բերեց ու արդէն սկսեց կառքը լծել։ Թրջուած ձին զուարճութիւնից փոնչացնում էր ու սմբակով խփում լծափայտերին։ Կարպօն նրա վրայ գոռում էր՝ «յէտ, յէտ»։ Պապ զարթնեց։ Մաշեան ճոնչացնելով բաց արեց մեր առջև դարպասը, մենք նստեցինք կառքը ու դուրս եկանք բակից։ Բոլորս էլ լուռ էինք, կարծես բարկացած էինք միմիանց վրայ։

Երբ երկու-երեք ժամ անցած՝ հեռուում երեւացին Ռոստոմլե ու Նախիջևանը, Կարպօն, որ մինչ այդ լուռ էր, արագ յետ նայեց ու ասաց.

—Հիանալի՛ աղջիկ ունի հայուկը։

Ու մտրակեց ձիուն։

II

Մի ուրիշ անգամ, արդէն ուսանող ժամանակս, երկաթուղով հարաւ էի գնում։ Մայիս ամիսն էր։ Կայարաններից մէկում, կարծեմ Բելգորոդի և Նարկովի մէջ, վազոններից դուրս եկայ պլատֆորմում զբօսնելու։

Երեկոյեան ստուերը արդէն տարածուել էր կայարանի

պարտէզի, պլատֆորմի և դաշտի վրայ. կայարանի շէնքը սքօղում էր մեր աչքից վերջալոյսը, բայց շոգեկառքի ծխի ամենավերին շերտերի քնքոյշ վարդերանգ գոյնից երևում էր, որ արևը դեռ թուրրովին չի մտել:

Պլատֆորմում մանգալիս նկատեցի, որ զբօսնող ճանապարհորդների մեծ մասը ման էր գալիս ու կանգնած էր երկրորդ կարգի մի վագոնի մօտ և այնպիսի արտայայտութեամբ, կարծես թէ այդ վագոնում որևէ նշանաւոր մարդ նրստած լինէր: Այդ վագոնի շուրջը խմբուած հետաքրքիրների մէջ գտնւում էր նաև իմ ուղեկից երիտասարդ սպան, մի խելացի ու համակրելի մարդ, ինչպէս լինում են առհասարակ այն բոլոր մարդիկ, որոնց հետ ծանօթանում ենք ճանապարհին: պատահաբար ու կարճ ժամանակով:

— Ինչի՞ն էք այդպէս նայում, — հարցրի ես:

Նա ոչինչ չպատասխանեց, այլ միայն աչքերով ցոյց տուեց մի ջահիլ աղջկայ վրայ: Մի 17—18 տարեկան աղջիկ էր այդ, ուռսաց ազգային շորերով, բաց գլխով և փոքրիկ թիկնոցով, որ անհոգ կերպով գցել էր մի ուսի վրայ: Ճանապարհորդ չպէտք է լինէր, այլ երևի կայարանապետի աղջիկը կամ քոյրը: Վագոնի պատուհանի մօտ կանգնած խօսում էր վագոնում նստած մի տարիքաւոր կնոջ հետ: Դեռ ժամանակ չէի ունեցել պարզելու ինքս ինձ համար, թէ ինչ է տեսածս, որ յանկարծ ինձ համակեց նոյն զգացմունքը, ինչ որ մի ժամանակ զգացել էի այն հայի տանը:

Աղջիկը զարմանալի գեղեցկուհի էր և այդ բանը անկասկածելի էր թւում թէ ինձ, թէ այն ամենքին, որոնք ինձ հետ միասին նայում էին նրան:

Եթէ, ինչպէս ընդունուած է, մասաւոմաս նկարագրեմ նրա արտաքինը, պէտք է խոստովանեմ, որ իսկապէս գեղեցիկ էին միմիայն նրա արձակ թողած և գլխի վրայ սև ժապաւէնով կապած խարտեաշ ալեծածան, խիտ մազերը, իսկ մնացածը կամ անկանոն էր, կամ միանգամայն սովորական: Մի առանձին տեսակ կոքէտութիւնից, թէ՛ կարճատեսութիւնից՝ աչքերը պուշ էին, քիթը անվճաբար վեր էր ցցուած, բերանը փոքր էր, պրոֆիլը թոյլ ու մեղկ կերպով գծագրուած, ուսերը՝ տարիքին համեմատ՝ նեղ էին, բայց և այնպէս այդ աղջիկը կատարեալ գեղեցկուհու տպաւորութիւն էր գործում, և նրան նայելով՝ ես կարող էի համոզուել, որ ուռս գէմքը գեղեցիկ երևալու համար կարիք չունի գծերի խիստ կանոնաւորութեան. այդ բաւական չէ, եթէ նոյնիսկ այդ աղջկայ դէմքին իր վեր ցցուած քթի տեղ դնէին կանոնաւոր ու պլաստիկայի

տեսակէտից կատարեալ մի քիթ, ինչպէս այն հայունու քիթն էր, կարծում եմ՝ դրանից նրա դէմքը կը կորցնէր իր բոլոր հրապոյրը:

Պատուհանի մօտ կանգնած խօսելիս՝ ոուս աղջիկը երեկոյեան խոնավութիւնից կուշ ու մուշ գալով՝ շարունակ յետ էր նայում դէպի մեզ, մերթ կռնները կանթում էր, մերթ ձեռները բարձրացնում դէպի գլուխը՝ մաղները շիտկելու համար, խօսում էր, ծիծաղում էր, դէմքի վրայ արտայայտում էր երբեմն դարմանք, երբեմն սարսափ, և ես չեմ յիշում ոչ մի վայրկեան, երբ նրա մարմինն ու դէմքը հանգիստ լինէին: Եւ նրա գեղեցկութեան ամբողջ գաղտնիքն ու հմայքը հէնց այդ մանրիկ, անհունօրէն գողտրիկ շարժումներն էին կազմում, այդ ժպիտը, այդ մեղ ուղղած արագ հայեացքները և այդ շարժումների նուրբ շնորհալիութեան զուգակցութիւնը՝ նրա ջանքիւթեան, նրա թարմութեան, նրա ծիծաղի ու ձայնի մէջ հնչող հոգեկան մաքրութեան և այն թուլութեան հետ, որ մենք այնքան սիրում ենք երեխաների, թռչունների, մատաղ եղնիկների ու դաւար ծառերի մէջ:

Թիթեռային գեղեցկութիւն էր այդ, որին այնքան սագում են վախ՛ւր, թուլումն պարտիզում, խինդ ու ծիծաղ և որի հետ դժուար է երեւակայել լուրջ միտք, վիշտ ու հանգիստ, և թւում է, թէ բաւական է մի լաւ քամի փչի պլատֆորմի վըրայով կամ անձրեւ գայ, և այդ փխրուն մարմինը յանկարծ կը թօշնի, և այդ քմահաճ գեղեցկութիւնը օդը կը ցնդի ինչպէս ծաղկափոշի:

— ԴՅՔՆ-ՇՆ... ախ քաշելով փնփնթացրեց սպան, երբ երկըրորս զանգից յետոյ գնացինք դէպի մեր վագոնը:

Իսկ թէ ինչ էր նշանակում այդ «ԴՅՔՆ-ՇՆ»-ը, դժուար թէ կարողանամ բացատրել:

Թերևս սիրտը տխրեց և չէր ուզում անջատուել գեղեցկուհուց ու դարձան երեկոյից և մտնել խեղդուկ վագոնը, կամ գուցէ նա էլ ինձ պէս անգիտակցաբար խղճում էր և գեղեցկուհուն, և ինքնիրան, և ինձ, և բոլոր ճանապարհորդներին, որոնք ծոյլ-ծոյլ ու անկամ էին գնում դէպի իրանց վագոնները: Անցնելով կայարանի պատուհանի առաջով, որի յետին իր գործիքի առաջ նստած էր մի գունատ, խունացած և մեծածնօտ դէմքով ու բարձրագանգուր, կարմրաշէկ մազերով հեռագրատան պաշտօնեայ, սպան ախ քաշեց ու ասաց.

— Գրաւ կը գամ, որ այդ հեռագրատան ծառայողը սիրահարուած է այն սիրուն աղջկայ վրայ: Ամայի դաշտում մի յարկի տակ ապրել այդ օդեղէն էակի հետ ու չսիրահարուել՝

մարդուս ուժից վեր է: Իսկ ի՞նչ անբախտութիւն է, բարեկամս, ի՞նչ ծաղր՝ լինել կորամէջք, փրչոտ, դժգոյն, կարգին ու ոչ յիմար մարդ և սիրահարուել այդ սիրուն ու յիմարիկ աղջկայ վրայ, որ զրօի ուշադրութիւն էլ չի դարձնում ձեր վրայ: Կամ աւելի ևս վատ, երևակայեցէք, որ այդ հեռագրատան ծառայողը սիրահարուած է և միևնոյն ժամանակ ամուսնացած, և որ կինն էլ իր պէս կորամէջք է, փրչոտ ու կարգին... Կատարեա՛ւ տանջանք:

Մի կոնդուկտոր մեր վագոնի կողքին կանգնած՝ նայում էր այն կողմը, ուր կանգնած էր գեղեցկուհին, և այդ կոնդուկտորի հարբեցողութիւնից փքուած, անախորժօրէն կուշտ ու կուռ և անքուն գիշերներից ու վագոնի ցնցումից յոգնած դէմքը խանդաղատանք ու խորագոյն վիշտ էր արտայայտում ու կարծես թէ այդ աղջկայ մէջնա իր ջահիլութիւնն էր տեսնում ու երջանկութիւնը, իր զգաստ վիճակն ու մաքրութիւնը, իր կնոջն ու զաւակներին, կարծես թէ զղջում էր և ամբողջ էութեամբը զգում, որ այդ աղջիկը իրանը չէ, և որ ինքը իր վաղաժամ ծերութեամբ, իր անճոռնի տեսքով ու ճարպոտ դէմքով նոյնքան հեռու է սովորական մարդավայել, ճանապարհորդավայել երջանկութիւնից, որքան գետինը երկնքից:

Երբորդ զանգը խփեց, լսուեցին սուլոցներ, և գնացքը ծոյլ-ծոյլ շարժուեց տեղիցը: Մեր պատուհանների առաջով յետ անցան նախ կոնդուկտորն ու կայարանապետը, յետոյ պարտէզն ու գեղեցկուհին իր հրաշալի, իր մանկօրէն-նենգ ժպիտով:

Գլուխս պատուհանից դուրս հանած՝ յետ նայելով տեսայ, թէ ինչպէս ոռոս աղջիկը աչքերով դնացքը ճանապարհ դնելուց յետոյ պլատֆորմով անցաւ այն պատուհանի առջևով, ուր նստած էր հեռագրատան ծառայողը, մազերը ուղղեց ու վաղեց պարտէզը: Կայարանի շէնքը այլևս չէր սքողում աչքիցս արևմուտքը, դաշտը փռուած էր առջևս, բայց արևը արդէն մայր էր մտել և ծուխը սև-սև փաթիլներով սփռում էր կանաչ թաւակերպ աշնանացանի վրայով: Տխրութիւն էր տիրում և զարնանային օդում, և մթնող երկնքում, և վազօնում:

Կոնդուկտորը մտաւ վագոնը և սկսեց վառել ճրագները:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ